ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2018/196

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.12.2018թ. թիվ 27/26-3/23309-18 գրությամբ «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00119157/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.12.2018թ. թիվ ԴՎԱ/4911 գրության հիման վրա, 14.12.2018թ. նախաձեռնել է «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.12.2018թ. թիվ ԴՎԱ/4911 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգում 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել է օրենսդրությամբ սահմանված ժամկետում, սակայն դրանց մեջ առկա են եղել անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2018թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխտանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և սահմանված կարգով eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

«ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը մերժել»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23209-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. ՍՑ-ԷՍ-2018/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.12.2018թ. թիվ 27/26-3/23309-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.12.2018թ. թիվ ԴՎԱ/4911 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.11.2018թ. նիստի թիվ 4 և 28.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մսի պահածոյի և պահածոյացված ամբողջական լոբու ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

Աճուրդի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում 1-ից 3-րդ չափաբաժինների մասով՝ միս, մսամթերք և տարբեր տեսակի մսային պահածոներ, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ սննդամերք ապրանքների մատակարարված լինելը:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով.

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 2-րդ կետով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 19.11.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով արձանագրել է, որ Աճուրդի շրջանակներում «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկները կազմել են.

- 1-ին չափաբաժնի մասով՝ 744,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);
- 2-րդ չափաբաժնի մասով՝ 756,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);
- 3-րդ չափաբաժնի մասով՝ 744,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);
- 4-րդ չափաբաժնի մասով՝ 780,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);

և որոշել է նույն չափաբաժինների մասով Ընկերությանը՝ ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության՝

- 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

- 4.3 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ հարցում ներկայացնել «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովի 22.11.2018թ. կատարված հարցմանն ի պատասխան ստացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 28.11.2018թ. տրամադրված տեղեկատվությունը, որի համաձայն՝ Ընկերության՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 656504,287 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 28.11.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Աճուրդի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես, մասնակցի կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Բացի այդ, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հավաստում մասնակցի կողմից ներկայացված պայմանագրում գնման առարկա է հանդիսանում մուրաբա տեղական արտադրատեսակը, այնինչ սույն ընթացակարգի հրավերով որպես նմանատիպ պայմանագրեր սահմանված են միս, մսամթերք և տարբեր տեսակի մսային պահածոներ ապրանքների մատակարարման պայմանագրերը, 4-րդ չափաբաժնի մասով որպես

«մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հավաստում մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են հաշիվ ապրանքագրերի մի մասը, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները և/կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ուստի, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 30.11.2018թ. ծանուցել է մասնակցին սահմանված կարգով շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկել անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
- 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ

պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից նույն կետով սահմանված ժամկետից ուշ

ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Նույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

- 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանու-թյուններ արձանագրվելու դեպքում

քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

- 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ g.gevorgyan@mil.am հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.10 կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք

աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը.

- 7.11 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.16 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

- 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված

գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- 7.16 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:
- 7.17 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.9-ից 7.16-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Ընդ որում «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը

գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ՝ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը;
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:
- 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն և ֆինանսական միջոցներ:
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին

համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով:

- Աճուրդի իմաստով նմանատիպ են համարվում 1-ից 3-րդ չափաբաժինների մասով՝ «միս, մսամթերք և տարբեր տեսակի մսային պահածոներ», իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «սննդամերք» ապրանքների մատակարարված լինելը:

- «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորում ներկայացված պայմանագրում գնման առարկա է հանդիսանում «մուրաբա» տեղական արտադրատեսակը, մինչդեռ Աճուրդի հրավերով որպես նմանատիպ պայմանագրեր սահմանված են «միս, մսամթերք և տարբեր տեսակի մսային պահածոներ» ապրանքների մատակարարման պայմանագրերը, իսկ 4-րդ չափաբաժնի մասով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի հիմնավորում մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են հաշիվ ապրանքագրերի մի մասը, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունների պատճենները և/կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- Աճուրդի շրջանակներում «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկները կազմել են.

- 1-ին չափաբաժնի մասով՝ 744,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);

- 2-րդ չափաբաժնի մասով՝ 756,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);

- 3-րդ չափաբաժնի մասով՝ 744,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ);

- 4-րդ չափաբաժնի մասով՝ 780,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 28.11.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը կազմել է 656504,287 ՀՀ դրամ, այսինքն, պակաս է 1-ից 4-րդ չափաբաժիններով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկների գումարներից:

- Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով՝ կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 30.11.2018թ. ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

- Սահմանված ժամկետում Ընկերությունը չի շտկել անհամապատասխանությունները, ինչի արդյունքում Հանձնաժողովի որոշմամբ «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.12.2018թ. թիվ 27/26-3/23309-18 գրությամբ «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00119157/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ